

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի
ԹԻՎ ԹԻՎ 3-Ա-6-Ա, 7-Ն, 8-Ն ԵՎ 9-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նիստի օրակարգի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը մարզպետարան չի ներկայացվել:

Թիվ 7-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածին կատարված հղումը սխալ է, քանի որ այն սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները գյուղատնտեսության բնագավառում: Անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին:

Թիվ 8-Ն որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ չի պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո «Ն» տառով նշում կատարելու անհրաժեշտություն չկա:

Որոշման նախաբանում կատարված հղումները սխալ են: Հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ, 9-րդ և 10-րդ մասերին:

Որոշմամբ ՀՀ Շիրակի մարզի Սարատակ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը պետական լիազորված մարմնի սահմանած ձևաչափին համապատասխան չի ներկայացվել: Բացի այդ, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության մեջ ծախսերն ըստ գործառնական դասակարգման ներկայացված չէ: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի՝ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կազմվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին համապատասխան պետական լիազորված մարմնի սահմանած ձևով և ներառում է՝

- տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի մուտքերի և ելքերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի և հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների միջև,
- տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով,
- տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ,
- այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

Որոշմամբ հաստատվել է համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ

հողվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով մինչև ա/թ մարտի 1-ը համայնքի ավագանուն ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2020 թվականի հաշվետվությունը:

Թիվ 9-Ա որոշումը նորմատիվ բնույթի դրույթներ է պարունակում, հետևաբար որոշման հերթական համարից հետո անհրաժեշտ է «Ն» տառով նշում կատարել:

Որոշման բովանդակության մեջ փոփոխվող իրավական ակտի հերթական համարից հետո «Ա» տառը փոխարինել «Ն» տառով:

Որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման բովանդակությանը, քանի որ որոշմամբ լրացումներ չեն կատարվել: Անհրաժեշտ է որոշման վերնագրում նշված «ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառերը հանել: Բացի այդ, որոշման դրույթները սխալ են համարակալված:

Որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում գումարի չափը թվերով և բառերով տարբեր է գրառված:

Որոշմամբ կատարված գումարային փոփոխություններով խախտվել է բյուջեի հավասարակշռությունը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի՝ համայնքի բյուջեում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հավասարակշռությունը:

Որոշումներում չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը, այսինքն՝ անհրաժեշտ էր նշել ստորագրող պաշտոնատար անձի անվան միայն սկզբնատառը: Բացի այդ, տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները գրառել ամբողջությամբ:

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
25.02.2021թ.*